



Դայաստանի կենսաբ. հանդես, 4(66), 2014

## ՍԵՎԱՆԱ ԼճԻ ԱՎԱՋԱՆՈՒՄ ԱՄՈՒՐՅԱՆ ՉԵԲԱԶՈԿԻ (*PSEUDORASBORA PARVA*) ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՆԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տ.Վ. ՎԱՐԴԻԳԱՆՅԱՆ, Ն.Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ, Վ.Լ. ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԿԵՆՆԴԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ և ԻԻԴՐՈԵԿՈՂՈՂԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ  
Դիրքությունը և ծկնարակները ինստիտուտ  
vardtigran@mail.ru

2011-2012 թթ. կատարվել են Սևանա լճի ավազանի ամուրյան չեբազոկի վերաբուժության առանձնահատկությունների ուսումնասիրություններ: Ամուրյան չեբազոկի սեռական կառուցվածքի վերլուծությունը ցույց է տվել, որ եղ և առու առանձնական միջն հարաբերակցությունը պոպուլյացիայի կազմում եղել է 1:1: Սևանա լճի ավազանում ամուրյան չեբազոկի անհատական բացարձակ բեղունությունը (ԱԲԲ) տատանվել է 240-ից 3000 ձկնիկի: Սևանա լճի ամուրյան չեբազոկի ծվաբիջների կազմի կենսաափական վերլուծությունը ցույց է տվել, որ չեբազոկը ձկանում է բաժիններով (6-ից 8 բաժին): Ձկնիկի օվալաձև է, երկարությունը 0.19-1.25 մմ է, իսկ լայնությունը՝ 0.13-0.75 մմ:

*Սևանա լիճ – ամուրյան չեբազոկ – սեռերի հարաբերություն – բեղունություն*

В 2011-2012 гг. были проведены исследования воспроизводительной особенности популяций амурского чебачка бассейна оз. Севан. Анализ половой структуры амурского чебачка показал, что в среднем соотношение самцов и самок в популяции составляло 1:1. Индивидуальная абсолютная плодовитость его в бассейне оз. Севан колебалась от 240 до 3000 икринок. Биометрический анализ состава ооцитов в яичниках показал, что икрометание порционное (от 6 до 8 порций). Икринки эллипсоидальные (длина икринок – 1.09-1.25 мм, ширина – 0.13-0.75 мм).

*Озеро Севан – амурский чебачок – соотношение полов – плодовитость*

The study of reproduction features of Stone moroko in the basin of Lake Sevan has been conducted in 2011-2012. Analysis of sexual structure of Stone moroko show, that the mean ratio between male and female individuals in the population were 1:1. Absolute Individual Fecundity of Stone moroko in the basin of Lake Sevan was 240-3000 roe. Biometric analysis of oocytes in the ovaries of Lake Sevan basin's Stone moroko has shown, that spawning is portioned (6-8 portions). Fish row has ellipsoidal form with the length from 0.19 to 1.25mm and width from 0.13-0.75mm.

*Lake Sevan – Stone moroko – sex ratio – fecundity*

Ամուրյան չեբազոկի *Pseudorasbora parva* (Temminck et Schlegel, 1846) թևական արեալը Ներառյալ է Ամուր գետի ավազանը, Մոնղոլիայում Բուկիր-Նուր լիճը, ճապոնիայի և ճապոնական ծովի արևմտյան ափի գետերը, հարավ-արևելյան Կոխայի գետերը մինչև հյուսիսային Վիետնամ: Նետագայում ամուրյան չեբազոկը ներմուծման միջոցով տարածվել է Միջն Կոխայի, Ռուսաստանի Եվրոպական մասի և Եվրոպայի հարավային մասի ջրականներում [2]:

Մոնղոլիայի ջրակալներում առաջին անգամ ձվադրող չերազոկների երկարությունը 50-55 մմ է, Ամուր գետում՝ 32-55 մմ [10, 16]: Միջին Ասիայի և Ղազախստանի ջրակալներում չերազոկները սեռահասուն են դաշտում 3,1-6,0 սմ երկարության և 1,0-4,5 գ զանգվածի դեպքում [4, 5, 14]: Մոլիսալայի տվյալների համաձայն, 32,0-79,6 մմ երկարությամբ ամուրյան չերազոկի եգ առանձնյակների բեղունությունը տատանվում է 388-ից մինչև 3060 ձկնիթ, միջինը՝ 1400 ձկնիթ [16]: Ղազախստանի ջրակալներում չերազոկի բեղունությունը միջինը կազմում է 1000 ձկնիթ [3, 22]:

Չերազոկի կողմից դրված ձկնիթը ուռչում է և ձեռք է բերում ելիասած կառուցվածք՝ 1,4-1,7x1,1-1,3 մմ չափերով [13, 14]:

Ամուր գետում չերազոկը բազմանում է հունիս-օգոստոսին՝ ջրի 16-18°C ջերմաստիճանային պայմաններում [13, 17]: Կորեական թերակղզու ավելի տաք ջրակալներում ձվադրում է մայիս-հունիսին, իսկ երեմն էլ մինչև օգոստոսի վերջը, Միջին Ասիայում և Ղազախստանում՝ ապրիլից մինչև հունիս-հուլիս կամ էլ նոյեմբեր մինչև օգոստոս [6, 7, 22, 24]: Չերազոկը ձվադրում է լճերի ափամերձ հատվածներում: Նրա ձկնիթը հրենց բարձր կազողականության շնորհիկ արագության մարմուտ են սուբստանտներին՝ առավել հաճախ բարերի վրա, ջրասլուզ եղած փայտերի ճյուղերի, փափկամարմինների խեցիների և անգամ պատահական ջուրն ընկած առարկաների վրա [2, 13, 14]:

Ամուրյան չերազոկները ընտրում են համար վայրեր ձվադրման համար և մաքրում են դրանք տիղմից: Զվարդումը տեղի է ունենում միայն առավոտյան ժամերին: Վրու առանձնյակները հսկում են դրված ձկնիթը, մաքրում են և հեռացնում ոչ կենսունակ ձկնիթները [14]:

XX դարի 60-ական թվականներին ամուրյան չերազոկն ընկնելով Արարատյան դաշտի ջրակալներ, տարածվել է և ներկայումս հանդիսանում է այդ տարածաշրջանի լայն տարածում ունեցող ձկնատեսակներից մեկը [19]: Սևանա լճի ավազանում ամուրյան չերազոկի առանձնյակներ առաջին անգամ հայտնաբերվել են Դրագուն գետի ակունքում 2011 թ., այսուհետև՝ Սևանա լճում [9, 23]:

Չշխատանքի հիմնական նպատակն է ուսումնասիրել ամուրյան չերազոկի վերաբերության առանձնահատկությունները Սևանա լճի ավազանում:


**Ըլյութ և մեթոդ:** Սևանա լճի լիտորալ հատվածում և լիճ թափվող հիմնական գետերում փորձանմուշների ձեռք բերման համար կատարվել է գիտական որս հետևյալ որսագրոծիքներով՝ ձեռքի ուռկան, կարթ, էկորան, թակարդ և այլն: Փորձանմուշների մշակումն կատարվել է ստանդարտ մեթոդներով [20]: Ձկները ֆիբսվել են ֆորմալինի 4 %-անց լուծույթով և վերլուծության են ենթարկվել լաբորատոր պայմաններում: Ընդհանուր առմամբ 2011-2012 թթ. Սևանա լինց, լիճ թափվող հիմնական գետերից և Դրագուն գետի ակունքից հավաքվել և կենսաբանական վերլուծության են ենթարկվել ամուրյան չերազոկի 586 առանձյակ: Կատարվել է ընդհանուր կենսաբանական վերլուծություն, այսինքն՝ որոշվել է յուրաքանչյուր ձկան երարությունը (մինչև թեփուկային ծածկի վերջը – I), զանգվածը (ընդհանուր զանգվածը – W) և զանգվածը առանց դրովային խոռոչի պարունակության – w), սեռը, սեռական արգասիքների հասունացման փուլը, տարիքը: Վերջին որոշվել է թեփուկների միջոցով [15, 18, 20]: Ձկների բեղունության ուսումնասիրության համար օգտագործվել են հասունացման IV և V փուլերում գտնվող սեռական արգասիքներով եգ առանձնյակներ (ըստ 6 բալային համակարգի) [21]: Անհատական բացարձակ բեղունությունը (ԱԲԲ) որոշվել է զանգվածային մեթոդով: Ձկների տրամագիր որոշման համար յուրաքանչյուր փորձանմուշից վերցվել է 30-ական ձկնիթ: Յուրաքանչյուր ձկնիթը չափվել է մակուսական միջոցով և կշռվել: Դրաբերական բեղունությունը (ՐԲ) հաշվարկվել է հնչանական մարմնի ընդհանուր զանգվածի (ՐԲ1), այնպես էլ որովայնի խոռոչի պարունակությունը հեռացված ձկան զանգվածի (ՐԲ2) [1, 12]: Որոշվել են անհատական բացարձակ բեղունությունը (ԱԲԲ) մարմնի զանգվածից (W), ինչպես նաև երկարությունից (l) և տարիքից կախվածության կոռելյացիայի գործակիցները և ռեգրետիոն հավասարման ցուցանիշները:

Կարիքացիոն վիճակագրական մշակումը կատարվել է, օգտագործելով համակարգչային վերլուծական փաթեթը (Statistica 8):

**Արդյունքներ և քննարկում:** Սևանա լճի ավազանում ամուրյան չերազոկի սեռական կառուցվածքի վերլուծությունը ցույց է տվել, որ եգ և արու առանձնյակների միջին հարաբերակցությունը պոպուլյացիայի կազմում եղել է 1:1, սակայն ըստ տարիքային դասակարգման առկա են եղել որոշակի տարրերություններ. 1 և 2 տարիքային խմբերում գերակայել են արու առանձնյակները, իսկ 3 տարիքային խմբում՝ եգ առանձնյակները (Ակ. 1):

Սևանա լճում և Դրագուն գետի ակունքում որոշ չափով գերակայել են արու առանձնյակները, իսկ Ձկնագետ գետում՝ եգ առանձնյակները (աղ. 1):

Սևանա լճի ավազանում առաջին անգամ ձվադրող ամուրյան չերազոկի երկարությունը եղել է 3,0-4,1 սմ: Ըստ Զամախասկի սեռերի հարաբերության դասակարգման չերազոկի պատկանում է ծկների առաջին խմբին, քանի որ ծկների եզ և այրու առանձնյակների աճի տեմպերի, սեռահասուն դաշնալու ժամանակահատվածի և կյանքի տևողության տարբերությունը չի դիտվել [8, 11]: Կատարվել է ամուրյան չերազոկի բեղունությունը ընտրագրող մի շարք ցուցանիշների վերլուծություն: Սևանա լճում ամուրյան չերազոկի անհատական բացարձակ բեղունությունը (ԱԲԲ) տատանվել է 240-3000 ծկնիկի: Ամուրյան չերազոկի, ինչպես նաև այլ ծկների անհատական բացարձակ բեղունությունը մեծանում է տարիքի, մարմնի երկարության և զանգվածի հետ զուգահեռ (Նկ. 2, 3, 4):




**Նկ.1.** Ամուրյան չերազոկի առանձին տարիքային խմբերի սեռերի հարաբերությունը Սևանա լճի ավազանում


#### Աղյուսակ 1. Սևանա լճի ավազանում ամուրյան չերազոկի սեռերի հարաբերությունը

Զորամբարներ	Սևանա լիճ	Հրազդան գետի ակունք	Ձկնագետ գետ
♀: ♂	1,0:1,1	1,0:1,1	2,5:1,0


Չնայած անհատական դրսւորումներին, փորձանմուշները ըստ երկարության, զանգվածի և տարիքի խմբերի բաժանելով գրանցվել է սերու կապ ծկան բեղունության և այդ ցուցանիշների միջև: Չերազոկի բեղունության և կենսաքանական ցուցանիշների (մարմնի երկարությունը, զանգվածը և տարիքը) կոռելյացիայի գործակցի ավելի բարձր արժեք գրանցվել է մարմնի զանգվածի և բեղունության միջև: Սևանա լճի ամուրյան չերազոկի անհատական բացարձակ բեղունությունը ավելի սերու կապված է ծկան մարմնի երկարության ( $r=0,80$ ) և զանգվածի ( $r=0,78$ ), քան տարիքի հետ ( $r=0,71$ ) (Նկ. 2, 3, 4):



**Նկ.2.** Սևանա լճի ամուրյան չերազոկի անհատական բացարձակ բեղունության և մարմնի երկարության հարաբերությունը



**Նկ.3.** Սևանա լիճ ամուրյան չերաչոլի անհատական բացարձակ բեղունության և մարմնի զանգվածի հարաբերությունը



**Նկ.4.** Սևանա լիճ ամուրյան չերաչոլի անհատական բացարձակ բեղունության և մարմնի ու տարիքի հարաբերությունը

Մարմնի երկարության և զանգվածի աճին գուգահեռ մեծանում է ձկնկիթների զանգվածը և չափերը: Զվարդումն ժամանակահատվածում ամուրյան չերաչոլի հասունության գործակիցը տատանվել է 2,46-19,50 %, որը կախված է նրանից, թե հերթական բաժնի զարգացման որ փուլում է գտնվել եղ առանձնյակը (աղ. 2):

**Աղյուսակ 2.** Սևանա լիճ ամուրյան չերաչոլի զանգվածի, երկարության, անհատական բացարձակ բեղունության, ձկնկիթների զանգվածի և հասունության գործակից միջին մեծությունները

Ձկան միջին զանգվածը, գ	Ձկան միջին երկարությունը, սմ	ՎԲԲ	Ձկնկիթների զանգվածը, մգ	Հասունության գործակիցը, %	n
$0,65 \pm 0,02$	$3,44 \pm 0,03$	$462,24 \pm 26,44$	$32,00 \pm 1,85$	$4,83 \pm 0,19$	58
$1,35 \pm 0,09$	$4,27 \pm 0,09$	$948,10 \pm 95,59$	$81,40 \pm 13,82$	$6,01 \pm 0,94$	10
$2,51 \pm 0,17$	$5,12 \pm 0,10$	$1783,33 \pm 274,21$	$225,00 \pm 54,29$	$9,41 \pm 2,63$	6

Այսպիսով, Սևանա լճում ամուրյան չերաչոլի անհատական բացարձակ բեղունությունը (ՎԲԲ) տատանվում է 240-3000 ձկնկիթ: Սևանա լիճ ամուրյան չերաչոլի ձկարգիշների կազմի կենսաշահական վերլուծությունը ցույց է տվել, որ չերաչոլը ձկարդում է բաժիններով, որի բանակը հիմնականում 6-ն է, երեսն էլ կարող է հասնել 8-ի: Ձկնկիթը օվալաձև է, նրա երկարությունը 0,19-1.25 մմ է, իսկ լայնությունը՝ 0,13-0,75:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Анохина Л.Е. Закономерности изменения плодовитости рыб. Наука, М., 295 с., 1969.
2. Атлас пресноводных рыб России. /Под ред. Ю.С. Решетникова, М., Изд-во “Наука”, I, 379 с., 2003.
3. Баймбетов А.А., Мамилова Р.Х. К биологии амурского чебачка Капчагайского водохранилища. В кн.: Биологические основы рыбного хозяйства республик Средней Азии и Казахстана. Душамбе: Дониш, с. 236-238, 1976.
4. Батраева М.Н. Приспособительные особенности амурского чебачка *Pseudorasbora parva* S. Разработка мер борьбы с ним. В кн.: Биология водоемов Казахстана. Алма-Ата, вып. 3, с.78-82, 1981.
5. Батраева М.Н. О воспроизводительной способности амурского чебачка в условиях прудовых хозяйств предгорной зоны Казахстана. В кн.: Рыбные ресурсы водоемов Казахстана и их использование. Алма-Ата, вып. 9, с. 67-69, 1975.
6. Батраева М.Н. К биологии амурского чебачка. В кн.: Биология водоемов Казахстана. Алма-Ата, с. 18-20, 1970.
7. Борисова А.Т. Случайные вселенцы в водоемах Узбекистана. Вопр.ихтиологии, 12, 1, с. 49-53, 1972.
8. Варданян Т.В. Рост амурского чебачка *Pseudorasbora parva* (Temminck Et Schlegel, 1846) в бассейне оз. Севан. Биоразнообразие и экологические проблемы сохранения дикой природы. Сборник статей международной научной конференции молодых ученых, посвященной 70-летию НАН Армении. Ереван, с. 237-241, 2013.
9. Варданян Т.В., Барсегян Н.Э., Габриелян Б.К. Проникновение Амурского чебачка *Pseudorasbora parva* (Temminck Et Schlegel, 1846) в бассейн озера Севан/ Материалы международной научной конференции: биологическое разнообразие и проблемы охраны фауны Кавказа, Ереван, с. 92-95, 2011.
10. Даидорж А., Демин А.И. Зоогеографический анализ ихтиофауны Монголии. В кн.: Природные условия и ресурсы Прихубсугуля. Иркутск, Улан-Батор, вып. 5, с. 141-158, 1977.
11. Замахаев Д.Ф. О типах размерно-половых соотношений у рыб. Труды Мосрыбвтуза, вып. 10, с. 183-209, 1959.
12. Иванков В.Н. Плодовитость рыб. Дальневосточный унив-т, Владивосток, 86 с., 1985.
13. Крыжановский С.Г., Смирнов А.И., Соин С.Г. Материалы по развитию рыб р. Амура. Тр. Амур. ихтиол. экспл. 1945-1949 гг., 2, с. 5-222, 1951.
14. Макеева А.П., Заки Мохамед М.И. Размножение и развитие псевдорасборо *Pseudorasbora parva* (Schlegel) в водоемах Средней Азии. Вопр. ихтиологии, 22, 1, с. 80-92, 1981.
15. Мусеев П.А., Азизова Н.А., Куранова И.И. Ихтиология. Изд-во “Легкая и пищевая промышленность”, М., 384 с., 1981.
16. Мухачева В.А. К биологии Амурского чебачка (*Pseudorasbora parva* Schlegel). - Тр. амур. ихтиол. экспедиции 1945-1949гг., 1, М., с. 365-374, 1950.
17. Никольский Г.В. Рыбы бассейна Амура. Итоги Амурской ихтиологической экспедиции 1945-1949. Изд-во АН СССР, М., с. 169-174, 1956.
18. Никольский Г.В. Экология рыб. “Высшая школа”, М., 366 с., 1974.
19. Питоян С.Х. Амурский чебачок *Pseudorasbora parva* (Cyprinidae) в водоемах Арапатской долины (Армения). Вопр. ихтиологии, 36, 4, с. 549-551, 1996.
20. Правдин И.Ф. Руководство по изучению рыб. Изд-во “Пищевая промышленность”, М., 376 с., 1966.
21. Сакун О.Ф., Буцкая Н.А. Определение стадий зрелости и изучение половых циклов у рыб. Изд-во “Главрыбвод”, Мурманск, 47с., 1963.
22. Язева Н.С. Распространение и некоторые биологические показатели амурского чебачка в оз. Балхаш. В кн.: Биологические основы рыбного хозяйства республик Средней Азии и Казахстана. Ашхабад: Ылым, кн. 2, с. 103-105, 1974.
23. Dallakyan M.R., Asatryan V.L., Barseghyan N.E., Vardanyan T.V., Yepremyan H.V., Hayrapetyan A.H. The study of the biocenoses formed in the water covered areas of Lake Sevan. Electronic Journal of Natural Sciences, 2, Issue2, 19, p. 31-33, 2012.
24. Uchida K. The fishes of Korea. Part I, Nematognathi, Eventognathi. Bull. Fish. Exp. Station Govern. Työsen, Husan, p. 1-458, 1939.

Սուացվել է 11.07.2014